ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՐՈՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЩИНА СЕЛА ХОРОНК
АРМАВИРСКОЙ ОБЛАСТИ

ՀՀ Արմավիրի մարզ, գ. Խորոնք
Հեռ. /10374- 099/03-08-08/

С. Хоронк Армавирской обл. РА
Тел. /10374- 099/03-08-08/

N 174 03 11 2017г

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի՝ 2017 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները :

· Առդիր՝ 8 էջ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, khoronq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2017 թվականի N 29

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 31-ի թիվ 7 նիստի թիվ 1 որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի վարչական սահմաններում գտնվող բնակելի տունը /կոդ՝04-050-058-018/, հասցեավորել Ավ. Իսահակյան 15:

2.Սույն որոշումը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային սպասարկման գրասենյակ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Կ.Տ.

2017 թ._ հոկտեմբերի 24
գ.Խորոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, khoronq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2017 թվականի N 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍՏԱՑԻԱ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2017 թվականի նոյեմբերի 21-ին ժամը 14 ^{00}-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի համայնքապետարանի շենքում անցկացնել Խորոնք համայնքի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 3.1-1/ ատեստացիա:
2. Ատեստավորման հանձնաժողովի նիստերի տեխնիկական աշխատանքների սպասարկումն իրականացնելու համար համայնքի ղեկավարի լիազորված անձ նշանակել աշխատակազմի քարտուղար՝ Աննա Գրիգորյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

2017 թ._ հոկտեմբերի 16
գ.Խորոնք

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, khoronq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2017 թվականի N 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2017 թվականի նոյեմբերի 21-ին ժամը 12 ^{00} –ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի համայնքապետարանի շենքում անցկացնել Խորոնք համայնքի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների երկրորդ կարգի մասնագետի /ծածկագիր՝ 3.1-1/թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ:
2. Սահմանված կարգով հայտարարություն տալ www.azdarar.am կայքում:
3. Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական աշխատանքների սպասարկումն իրականացնելու համար համայնքի ղեկավարի լիազորված անձ նշանակել համայնքապտարանի աշխատակազմի քարտուղար Աննա Գրիգորյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Կ.Տ.

2017 թ._ հոկտեմբերի 16
գ.Խորոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, khoronq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հոկտեմբերի 2017 թվականի N 26-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՑ 2-ՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.3-2) ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ կետի 1-ին մասով, << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով, << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 09.10.2017 թվականի թիվ 01/07.1/4174-17 գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի համայնքապետարանի համայնքային ծառայողներից 2-րդ կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.3-2) պաշտոնի անձնագրում կատարել հետևյալ լրացումները. VI Գիտելիքներ և հմտություններ բաժնում՝ դ/ունի համակարգչային և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, կետից հետո լրացնել՝ ե/ ունի <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի անհրաժեշտ իմացություն ենթակետը, VII Իրավունքներն ու պարտականությունները բաժնում՝ ժ/ իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ , ենթակետից հետո լրացնել՝ ժա/ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է << Աղբահանության և սանիտարական

մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ ենթակեղը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

2017 թ._ հոկտեմբերի 10
գ.Խորոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, 68689, khoronq.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

10 հոկտեմբերի 2017 թվականի N 16

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով՝

Կարգադրում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքում կրծողների դեմ կազմակերպված պայքարի միջոցառում իրականացնելու և թունաքիմիկատի բաշխման պատասխանատու նշանակել Խորոնք համայնքի ղեկավարի օգնական Սամվել Կարապետյանին:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԳԻՍ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Կ.Տ.

20 17 թ. _հոկտեմբերի __10__
գ.Խորոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, 68689, khoronq.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

02 հոկտեմբերի 2017 թվականի N 15

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Գնումների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 30.01.2015 թվականի N105-Ն <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք համայնքում խմելաջրի կառուցման նախագիծը՝

Կարգադրում եմ.

1.Ստեղծել շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա՝ստորև ներկայացվող անհատական կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝	Սարգիս Նահապետ
Անդամներ՝	Գրիշա Ասատրյան
	Աննա Գրիգորյան
	Սամվել Կարապետյան
	Հովասափ Խաչատրյան

Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Խորոնքի համայնքապետարանի առաջատար մասնագետ Վ.Կարապետյանին:

2. Սահմանել, որ շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը տեղի կունենա « 17 » հոկտեմբերի 2017թ. ժամը 11^{00}-ին, Խորոնքի համանքապետարանի շենքում՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ.Խորոնք, Սայաթ-Նովա 2 հասցեում:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Մրցութային փաթեթների բացման նիստի ընթացքում ներկա է լինելու << Վեոլիա ջուր>> ՓԲԸ << Արևմուտք>> տարածաշրջանի տնօրինության ներկայացուցիչ Ս. Սահակյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԳԻՍ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Կ.Տ.Հ

20 17 թ. _հոկտեմբերի __02__
գ.Խորոնք